ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

<< ԳՄ ԲՄԱՇՁԲ-18/02 ծածկագրով բաց մրցույթի գնման ընթացակարգի հայտերի գնահատման նիստի

Գավառ, Կենտրոնական հրապարակ 7 **«02» «08» 2018թ.**
ժ 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Արմեն Զոհրաբյան /ԳԱՊ/,
Հանձնաժողովի անդամներ Յուրա Մուշեղյան /ԲԱ/, Գևորգ Խաչատրյան/ԳԱ/,Վալեր Հոդաբաշյան/ԲԱ/,Գուրգեն Մելքոնյան/ԳԱ/
Հանձնաժողովի քարտուղար՝ Արթուր Բաղդեյան/ՄՀՄ/

1. Հայտերի գնահատման նիստում գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը՝ և կոմիտեի կողմից մասնակցի հարկային պարտավորությունների վերաբերյալ ստացված տեղեկատվությունը:

Ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ.

<<ԱՐՍԵՎ>> ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված կարգով ներկայացված կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող տեխնիկական միջոցների մասին տեղեկանքում (Հավելված 5. 1) առկա է հետևյալ թերությունները՝

- աղյուսակի 1-ին կետում նշված չէ ինքնաթափի մակնիշը:
- աղյուսակի 2-րդ կետում նշված չէ ինքնաթափի մակնիշը, պետ համարանիշը գրված է 32SS754, սակայն տեխնիկական անձնագրում գրված է 32SS745:
- աղյուսակի 4-րդ կետում բուլդոզերի մակնիշը գրված է U606, սակայն տեխնիկական անձնագրում գրված է S606:
- աղյուսակի 6-րդ կետում տեսակը գրված է էքսկավատոր ամբարձիչ, սակայն տեխնիկական անձնագրում գրված է էքսկավատոր բեռնիչ:

Հրավերով սահմանված կարգով ներկայացված կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկանքում (Հավելված 5. 2) առկա է հետևյալ թերությունը՝

- աղյուսակի 1-ին կետում Արտակ Ադամյանի աշխատանքային փորձի ժամանակահատվածը նշված է 2016 թվականից առ այսօր, այնինչ հրավերով պահանջվում է առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ:

Հրավերով սահմանված կարգով ներկայացված կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող տեխնիկական միջոցների վարձակալության պայմանագրերից մի մասի ժամկետի ավարտ նշված է 2018 թվականի դեկտեմբերի 31-ը, իսկ մյուս մասի վերջնաժամկետ նշված է 2019 թվականի դեկտեմբերի 31-ը, քանի որ աշխատանքների կատարման պայմանագրով կատարման ժամկետ է սահմանվելու միայն 2018 թվականի համար, իսկ մյուս տարիների համար աշխատանքների կատարման ժամկետ սահմանված չէ, ուստի խնդրում ենք տեխնիկական միջոցների վարձակալության պայմանագրերում կատարել համապատասխան ուղղում՝ կատարման վերջնաժամկետը նշելով՝ անժամկետ:

Ղեկավարվելով ''Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի 47-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովը որոշեց՝ էլեկտրոնային եղանակով ծանուցել <<ԱՐՍԵՎ>> ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները կամ արձանագրված թերությունների և անհամապատասխանությունների վերաբերյալ ներկայացնել իր գրավոր դիրքորոշումն:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման և կամ հայտերի գնահատման և արդյունքների ամփոփման նիստը հրավիրել 2018 թվականի օգոստոսի 6-ին, ժամը 12:00-ին, ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7, Մարզպետարանի վարչական շենք, N 212 աշխատասենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Նախագահ՝ _____ Ա. Զոհրաբյան

Անդամներ՝ _____ Յու. Մուշեղյան

_____ Գ. Խաչատրյան

_____ Վ. Հոդաբաշյան

_____ Գ. Մելքոնյան

Քարտուղար՝ _____ Ա.Բաղդեյան